



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(63), 2011

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հ.Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի
կենդանաբանության և ֆիզիոլոգիայի ամբիոն*

Վերլուծելով հայերեն կենդանաբանական տերմինաբանությունը, մասնավորապես, կենդանատեսակների անվանումները, պարզվեց, որ հայերենում առկա են բազմաթիվ անճշտություններ, անհստակություն, կամայական, անհիմն թարգմանություններ: Շնորհիվ հայերեն բարբառային հարուստ լեզվի, ստեղծվել են նաև կենդանիների հոմանիշ շատ անվանումներ: Կենդանաբան գիտնականները, բախվելով կենդանաբանական տերմինաբանության դժվարությունների հետ, այնուհանդերձ, իրենց առջև կենդանիների հայերեն անվանումների շտկման խնդիր չեն դրել: Հոդվածում մի շարք օրինակներով հիմնավորվում է ստուգաբանական մեթոդի կիրառման անհրաժեշտությունը թարգմանություններ կատարելու ժամանակ և առաջարկվում են ողնաշարավորների ճշգրտված, շտկված կամ նոր անվանումներ:

Ողնաշարավոր կենդանիներ — անվանումներ — ստուգաբանություն

При анализе армянской зоологической терминологии, в частности видовых названий животных, выяснилось, что в армянском языке существуют неточности, произвольные, необоснованные переводы наименований животных. Большой отпечаток на противоречия в этих названиях оставил и богатый лексический армянский язык. Что касается ученых зоологов, то они, сталкиваясь с трудностями зоологической терминологии, тем не менее не ставили задачу уточнения, исправления наименований животных.

В статье обосновывается необходимость применения этимологического метода при переводах на ряде примеров, и предлагаются уточненные, исправленные или новые наименования позвоночных животных.

Позвоночные животные – наименования – этимология

After conducting a revision of the Armenian zoological terminology, and the names of species, in particular, it was found out that inaccurate, arbitrary and ungrounded translations occur. The Armenian language has greatly influenced by the contradictions of the denominations. The zoologists who face the difficulties in the zoological terminology have never thought of correcting and making these denominations more accurate.

The necessity of using the etymological method in translation of a number of examples is justified in the article. It also offers more accurate, corrected or quite new names of vertebrates.

Vertebrate animals - names – etymology

Հայաստանն իր աշխարհագրական դիրքի և բարձունքային գոտիականության շնորհիվ հարուստ է կենդանատեսակներով:

Դրանց ուսումնասիրությունով զբաղվել են ինչպես գիտնականները, այնպես էլ բնասերները:

Հայ կենդանաբան գիտնականները, բախվելով կենդանիների անվանումների անճշտությունների, խճճվածության, անհստակության, կամայական թարգմանությունների, կենդանաբանական տերմինաբանության այլ դժվարությունների հետ, այնուհանդերձ, իրենց առջև կենդանիների հայերեն անվանումների շտկման խնդիր չեն դրել:

Ներկայումս, երբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հայոց լեզվի մաքրությանն ու անաղարտությանը, մեր լեզուն հայերեն անվանումներով հարստացնելուն, դպրոցական և բուհական մասնագիտական դասագրքերի լեզվական մաքրության խնդիր է դրված, շատ կարևոր է բոլոր մասնագիտությունների բնագավառում նույնպես հետևողական լինել այս պահանջին, մասնավորապես կենդանաբանության բնագավառում, որտեղ առկա են կենդանիների բազմաթիվ անվանումների չհիմնավորված, ոչ ճիշտ թարգմանություններ: Շնորհիվ հայերեն բարբառային հարուստ լեզվի ստեղծվել են նաև կենդանիների հոմանիշ շատ անվանումներ:

Այժմ շատ դժվար է պարզել, թե ինչ սկզբունքով են առաջնորդվել մեր նախնիները՝ հնարելով կենդանիների անվանումները: Մի դեպքում հաշվի են առել կենդանու չափերը՝ (գորտ-ցուլ, գողիաթ, կետ (կետոսե հուն.՝ ծովային հսկա հրեշ), շպրտս (փոքրիկ ձկնիկ) [22] և այլն), մեկ այլ դեպքում՝ գույնը (голубь-голубой) [26], նախշը (ցանցավոր պիթոն, ակնոցավոր օձ), մարմնի ձևը՝ (палтус-плоский, щука-щуплый) [22] կամ էլ որևէ հատկություն, օրինակ՝ крокодил (crocodilus — հուն.՝ քարի վրա տաքացող մողես, բառացի՝ քարի որդե) [22, 28], կամ լորտու (լորձուտ, փսլեքոտ, շողիքոտ) [2], агама (թուրքմ.՝ արևին անիծող) [22] և այլն: Բացի այդ, ամեն մի ժամանակակից կենդանի լեզու երկարատև պատմական զարգացման արդյունք է, որի ընթացքում որոշ բառեր դուրս են մնացել օգտագործումից, նրանց փոխարինել են նորերը: Լինում է նաև այնպես, որ հնագույն բառերը պահպանվելով լեզվի մեջ, կորցնում են իրենց սկզբնական իմաստը և ձեռք են բերում նոր իմաստ: Տեղի է ունենում նաև լեզուների բարդ փոխազդեցություն: Ինչ վերաբերում է կենդանիների ազգային անվանումներին, ապա դրանց միջև իմաստային տարբերությունները կարող են լինել շատ զգալի, կամ էլ ոչ այնքան մեծ: Բառերի, անվանումների սկզբնական իմաստի բացատրությունը տալիս է ստուգաբանությունը:

Վերլուծելով հայերեն կենդանաբանական տերմինաբանությունը, բացահայտվեցին կենդանիների անվանումների մի շարք կամայական, չհիմնավորված թարգմանություններ: Շատ հաճախ կենդանիների անվանումները տրվել են սիրողական մակարդակով՝ ոչ խորը մասնագիտական վերլուծության և գիտական ուսումնասիրության պատճառով: Կիրառելով ստուգաբանական մեթոդը մեր կողմից կատարվել է ողնաշարավոր կենդանիների անվանումների թարգմանական սխալների, անճշտությունների ուղղում, հայալեզու գիտական գրականության մեջ հանդիպող կենդանիների ռուսերեն կամ լատիներեն համարժեք ձևերի անվանումների փոխարեն առաջարկվել են դրանց հայերեն համարժեքները:

Որոշ դեպքերում տարբեր հեղինակներ միևնույն կենդանուն թարգմանաբար տվել և շարունակում են տալ զանազան չհիմնավորված անվանումներ, որոնք չեն համապատասխանում նրանց ստուգաբանական իմաստին, չեն բնութագրում կենդանուն: Այսպես, կրիաներից *Chelydra serpentina*-ն ռուսերեն թարգմանված է каймановая черепаха, իսկ հայերեն՝ կայմանային, կայմանյան, կայմանավոր և նույնիսկ Կայմանովի կրիա [10, 15, 17]: Ստուգաբանությամբ պարզվեց (5), որ գրականության մեջ հանդիպող հայերեն թարգմանություններից ոչ մեկը չի համապատասխանում կայման բառի իմաստին: *Caiman* անվանումն իսպանական է, որը նշանակում է խիզախ [4]: Հարավային Ամերիկայում և նրա հարակից կղզիներում տարածված ալիգատոր կոկորդիլոսներին, որոնք աչքի են ընկնում իրենց կատաղի հարձակողական վարքով, անվանում են *Caiman crocodilus*: Հաշվի առնելով այս անվան իմաստը, ռուսերենում վերը նշված կրիան անվանել են каймановая черепаха, որտեղ каймановая բառական է և ճիշտ բնութագրում է կենդանու կատաղի վարքը: Նշենք, որ կա նաև ձկնատեսակ՝ каймановая щука, որն իր անվանումը նույնպես ստացել է հարձակողական վարքի պատճառով:

Այսպիսով, նկատի ունենալով վերը շարադրվածը, ճիշտ ենք համարում հայերենում օգտագործել կայմանե թարգմանությունը և կենդանիներին անվանել կայման կրիա, կայման գայլաձուկ և այլն:

Կան նաև մի շարք չհիմնավորված թարգմանություններ, երբ, չպարզելով ռուսերեն անվանումների ծագումը, ստացվել է անթույլատրելի շեղում, աղավաղում: Այսպես՝ ենթադրելով, որ *дергач* (*Crex crex*) կոչվող թռչնի անվանումը ծագել է *дергаться* բառից, թարգմանել են *güçlüq huy* [10, 17]: Մինչդեռ ռուսերեն անվանումը ծագել է թռչնի հարսանեկան շրջանում *дерг-дерг*է ձայներ արձակելու պատճառով [20, 26]: *Индейка кустарная* (*Alectura latham*) սխալմամբ թարգմանվել է *թփուտային հնդկահավ* [15], այնինչ *кустарная* նշանակում է *տնայնագործ* և *թփի* (ռուսերեն *куст*) հետ կապ չունի:

Մեկ այլ օրինակ՝ *летучий дракон* (*Draco volans*) կոչվող մողեսը թարգմանված է թռչող վիշապ [10, 11, 16, 17, 18]: Վիշապն բառը ստուգաբանվում է որպես հսկայական մեծություն ունեցող զարհուրելի կենդանի (օձ, ձուկ, կետ) [2], իսկ դրակոնը հեքիաթային թևավոր հրաշունչ հրեշ է [2, 25]: Ուրեմն ճիշտ կլինի այս մողեսին *թռչող դրակոն* անվանելը: Նույն ձևով օձերից *удавчик*-ը (*Eryx miliaris*) պետք է թարգմանվի ոչ թե *վիշապիկ* [10, 15] (հսկանիկ փոքրացուցիչ վերջածանցով անհերթելի է հնչում), այլ *վիշապօձուկ*՝ փոքր, բայց զարհուրելի օձ:

Օձերից *питон ромбический* (*Morelia argus*) թարգմանված է *պիթոն շեղանկյունային*, *շեղանկյուն* կամ էլ *շեղանկյունավոր* [15]: Մինչդեռ *ромбический* և *անվանումն* օձը ստացել է մարմնի վրայի շեղանկյունաձև նախշերի պատճառով: Հետևաբար, ճիշտ ենք համարում այս տեսակն անվանել *պիթոն շեղանկյունազարդ*: *Эйренис скромный* (*Eirenis modestus*) տեսակը թարգմանված է *էյրենիս հնազանդ* [15]: Պարզելով օձի վարքը՝ տեսակն անվանել ենք *էյրենիս խաղաղ*, քանի որ մարդուն հանդիպելիս աշխատում է հեռանալ:

Հաճախ հայերեն թարգմանություններում օգտագործվում է կենդանիների անվանումների ռուսերեն կամ լատիներեն համարժեք ձևը: Այսպես, ունենք ձկների անվանումների հետևյալ թարգմանությունները. *густера* — գուստերա [7, 8, 10, 12, 13], *линь* — լին [9, 16], կամ տինկա (լատիներեն՝ *Tinca tinca*) [10, 15, 17], *шип* — շիպ [8, 18], *горчак* — գորչակ [8, 10], *белуга* — բելուգա [8, 18], *корюшка* — կորյուշկա [10, 17], *бычок бубыр* — ցիլի բուբիր [8], *бычок, семейство бычковых* — բիչկի, բիչկիների ընտանիք [15], *тарань* — տարան [10], *горбюшка* — գորբուշա [9], *лещ* — լեշ, *чир* — չիր [17], *чебачок* — չեբաչոկ [8] և այլն:

Թռչուններից ունենք *сипуха* — սիպուխա [10], *тювик* — տյուվիկ [1, 15] և այլն:

Այս բառերի ստուգաբանությամբ պարզվեց հետևյալը.

Густера (*Blicca bjoerkna*) ձուկն իր անվանումը ստացել է *густо* բառից, քանի որ ինչպես աշնանը, այնպես էլ գարնանը այս տեսակը կազմում է հսկայական հոծ վտառներ [19]: Այս ձկան ընդունակությունը հոծ վտառներ առաջացնելու հիմք է հանդիսացել նրան այդպես անվանելու [19, 21]:

Հայտնի ձկնաբան Մ. Դադիկյանը [7] այսպես է նկարագրում ձկան վարքը. «... Այդ տեղերում նա ապրում է վտառներով, որոնք կազմված են լինում մի քանի հարյուր ձկներից... Վտանգի դեպքում ցրվում են, այնուհետև նորից կուտակվում են նույն տեղում: Փախուստի դեպքում վտառի բոլոր առանձնյակները լողում են միևնույն ուղղությամբ: Փոքրաթիվ վտառներում ձկները լողում են մեկը մյուսի հետևից՝ քարավանի նման: Ի տարբերություն մյուս տեսակների այս ձկները վտառներ են կազմում նաև ձվադրման համար...»: Սակայն, չնայած այսպիսի նկարագրությանը, գրքի հեղինակը այս ձկանը նույնպես *գուստերա* է անվանում: Ըստ երևույթին, հեղինակն իր առջև ձկների հայերեն անվանումների շտկման խնդիր չի դրել:

Հանդիպում է նաև *густера* ձկան այսպիսի թարգմանություն՝ *արծաթաքրավ* [15]: Ճիշտ է, այս ձկան մարմինը արծաթագույն է, և արտաքինով հիշեցնում է բրամի [19], սակայն այդ թարգմանությունը չի կարելի ճիշտ համարել, քանի որ կա ձկան տեսակ՝ *серебрянный лещ* – *Pterycombus brama* (լեշ ձուկը հայերեն թարգմանվում է բրամ), որը պատկանում է պերկեսակերպերի կարգի ծովային բրամների ընտանիքին, մինչդեռ *густера*-ն պատկանում է ծածանակերպերի կարգին [6]:

Կա այս ձկան ևս մեկ անվանում՝ *զոճի* [3]: Իր հերթին *сазан* ձուկն է թարգմանված *զոճի* [15]: Սա նույնպես անընդունելի է: Ըստ երևույթին, *զոճի* անվանումը

պետք է ընդունվի միայն որպես ժողովրդական: Հանդիպում է նաև *густера* ձկան հաթկականացված տարբերակ՝ *густера* [14]: Ելնելով վերը շարադրածից՝ *густера* ձկնատեսակը հայերեն անվանել ենք *վոստածուկ*, որը, ինչպես և ռուսերենում, բնութագրում է նրա ապրելակերպը, վարքը:

Линь (Tinca tinca) ձուկն իր անունը ստացել է ռուսերեն *линь*-ե բառից, քանի որ ջրից հանելիս իսկույն գույնը փոխում է [19], և թվում է, թե մաշկն է փոխում: Հիշտ ենք համարում այս ձուկն հայերեն անվանել *մաշկափոխ*: Նրա լատիներեն անվանումը՝ *Tinca tinca* նույնպես նշանակում է մաշկի գույնը փոխող:

Шип (Acipenser nudiiventris) ձուկը, որը պատկանում է մորեակերպերի կարգին, հայերեն թարգմանված է *շիպ* [8, 18], *փշածուկ* [10, 17]: Փշածուկ է անվանվում նաև *колюшка*-ն, որը պատկանում է փշածկնակերպերի կարգին [10, 15, 17, 18]: Պարզելով, որ *шип* ձուկն իր ռուսերեն անունը ստացել է իր տուր դնչի պատճառով [23], այս ձուկն անվանել ենք սեպադունչ, որն ավելի ճիշտ պատկերացում է տալիս կենդանու մասին:

Горчак (Rhodeus sericeus) ձկան անունն արդեն հուշող է. դառը լինելու պատճառով ճիշտ կլինի անվանել *դառնածուկ* (ունենք *горчак* բույսի հայերեն թարգմանություն՝ *դառնախոտ*):

Корюшка (Osmerus eperlanus) ձկան անունը ծագել է *коря*-ե բառից, քանի որ ձվադրման շրջանում ձկան ընդհանուր գույնը մգանում է, իսկ գլխի, մեջքի և կողքերի մաշկը դառնում է թմբիկավոր՝ նմանվելով ծառի կեղևի [19]: Այդ պատճառով ճիշտ ենք համարում հայերեն այս ձկնիկին անվանել *կեղևածկնիկ* կամ *սաղմունիկ կեղևալի*:

Белуга (Huso huso) ձկան անունը ծագել է ռուսերեն *белый*-ե բառից, քանի որ նրա միսը սպիտակ է [22], հետևաբար, ճիշտ չէ այս ձուկը հայերեն բերուգա անվանելը: Որոշ հեղինակներ [10, 17] *белуга* ձուկը թարգմանել են *թառափ*, ինչն էլ կիրառվել է նաև մեր կողմից:

Уклея (Alburnus alburnus) ձուկը, որը պատկանում է ծածանակերպերի կարգին, իր անվանումը ստացել է այն պատճառով, որ թեփուկներին ձեռք տալիս դրանք հեշտությամբ թափվում են և կաշում մատներին [19, 24]: Հայերեն որոշ գրականության մեջ այս ձկնատեսակն անվանում են *սպիտակածուկ*՝ փորի կողմում սպիտակ արծաթափայլ թեփուկներ ունենալու պատճառով: Սակայն, պարզելով, որ սպիտակածուկ են կոչվում նաև մեկ այլ՝ սաղմունակերպերի կարգին պատկանող ձկնատեսակները (род *белорыбцы*, *Stenodus*), և շփոթելուց խուսափելու համար նպատակահարմար ենք գտել այս ձկանը *կաշողածուկ* անվանելը, ինչը միանգամայն դիպուկ ցույց է տալիս նշված հատկանիշը: Որպես հիմնավորում կարելի է ընդունել նաև այն փաստը, որ սպիտակածուկն ամբողջությամբ սպիտակ է, իսկ կաշողածկան մեջքը մուգ է:

Голомянка (Comephorus baicalensis) և *гольян-красавка (Phoxinus phoxinus)* ձկների անվանումները ստուգաբանելիս պարզվեց, որ երկուսն էլ ծագել են *голый*-ե բառից [19, 26]: *Голомянка* ձկնատեսակի մարմինը գուրկ է թեփուկներից, համարյա թափանցիկ է, գույնը թույլ վարդագույն է, իսկ *гольян*-ի մարմինը պատված է շատ մանր, նուրբ թեփուկներով, գունավորումը խայտաբղետ է: Մեր կողմից առաջարկվել են այս ձկների հետևյալ հայերեն անվանումները՝ *թեփուկագուրկ բայկալյան* և *մանրաթեփուկ-զեղանի*: Նշենք, որ գրականության մեջ *гольян-красавка*—ն թարգմանված է *մերկածածան սովորական* [15], այն դեպքում, երբ այս տեսակն ունի մանր թեփուկներ, իսկ թեփուկներից գուրկ է *голомьянка* —ն: Մյուս կողմից կա ձկնատեսակ, *голец обыкновенный (Noemacheilus barbatulus)*, որը նույնպես պատկանում է ծածանակերպերի կարգին, թեփուկները բացակայում են կամ դրանք շատ մանր են և աննկատելի: Գրականության մեջ դրան անվանում են *մերկածուկ* կամ *լերկածուկ* [6, 10, 15]:

Брызгун (Toxotes jaculator) ձուկն ապրում է ջրի մակերեսի մոտ: Երբ օդում ջրի մակերեսից 1-2 մ բարձրության վրա միջատ է նկատում, լեզվի և քիմքային հատուկ ակոսի միացումից առաջացած խողովակի օգնությամբ ջրի կաթիլների ուժեղ շիթ է արձակում, գոհին շմեցնում և կոլ տալիս: Այս ձկնատեսակն անվանել ենք *ցայտահար*:

Թռչուններից *сипуха*—ն (*Tyto alba*) ռուսերեն անունը ստացել է խոպոտ, թշտացնող ձայներ արձակելու համար (*сипыть* — խզխզան, խոպոտ): Ուստի ճիշտ ենք համարում այս թռչունն անվանել *խզխզան* բու: Հոռետեսների ընտանիքին պատկանող *тювик (Accipiter brevipes)* թռչնին ռուսերեն այդպես են անվանել *тьюю-вик, тьюю-вик*: ձայներ արձակելու հատկության համար [27] և այլն:

Նման սկզբունքով ճշգրտել և թարգմանել ենք ողնաշարավոր կենդանիների բազմաթիվ այլ անվանումներ:

Այսպիսով, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարող ենք ասել, որ կենդանաբանական թարգմանական աշխատություններ գրելիս անհրաժեշտ է կիրառել ստուգաբանական մեթոդը, ինչի շնորհիվ կշահի կենդանաբանությունը և մենք կխուսափենք կենդանիների անվանումների նկատմամբ տարակարծություններից:

Հուսով ենք, որ մեր կողմից առաջարկված վերոնշյալ հայերեն անվանումները հաշվի կառնվեն հետալսու հրատարակվող կենդանաբանական աշխատություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աղամյան Մ.Ս.* Հայաստանի թռչունները: Գիտահանրամատչելի ակնարկ: Եր.: Սովետական գրող, 232 էջ, 1985:
2. *Աճառյան Հ.* Հայերեն արմատական բառարան: Ա հատոր, Ա-Դ, Եր.: Երևանի համալս. հրատ., 698 էջ, 1971; Դ հատոր, Պ-Ֆ, Եր.: Երևանի համալս. հրատ., 677 էջ, 1979:
3. *Անանյան Վ.Ս.* Հայաստանի կենդանական աշխարհը: Հ. V: Ձկներ և սողուններ: Եր.: Հայաստան, 451 էջ, 1975:
4. *Գրգեարյան Հ.Ղ., Հարությունյան Ն.Ս.* Աշխարհագրական անունների բառարան: Եր.: Լույս, 296 էջ, 1987:
5. *Գրիգորյան Հ.Ջ.* Կայմանե կենդանաբանական տերմինի ստուգաբանությունը և գործածությունը թարգմանությունների մեջ: Հայաստանի կենսաբ. հանդես, 54, 3-4, էջ 264-265, 2002:
6. *Գրիգորյան Հ.Ջ.* Ծածանային ձկների հայերեն անվանումների վերլուծությունը և ճշգրտումը: Հայաստանի կենսաբ. հանդես, 57, 3-4, էջ 254-258, 2005:
7. *Դադիկյան Մ.Գ.* Հայաստանի ձկները, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 212 էջ, 1971:
8. *Եղիազարյան Է.Ս., Եղիազարյան Ս.Ս.* Ձկներ (ուս. ձեռն.): Եր.: Երևանի համալս. հրատ., 100 էջ, 2003:
9. Զաքարյան Խ.Ա. Ողնաշարավորների կենդանաբանություն (ուս. ձեռն.): Եր.: Հայկ. պետ. մանկ. ինստ. հրատ., 88 էջ, 1979:
10. *Համբարյան Մ.Ե.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Հ. 3 (պարեգոտավորներ, անգանգներ, ձկներ), Եր., 207 էջ, 1999; Հ. 4 (երկկենցաղներ, սողուններ), Եր., 142 էջ, 2001; Հ. IV (թռչուններ, կաթնասուններ), Եր., 360 էջ, 2002:
11. Հայ-ռուսերեն բառարան: Գլխ. խմբ. Ե.Հ. *Գալստյան*, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 724 էջ, 1987:
12. Հայաստանի բնաշխարհ: Հանրագիտարան: Գլխ. խմբ. *Հ.Ս. Այվազյան*, Եր.: Հայկական հանրագիտարան, 692 էջ, 2006:
13. Հայաստանի կենսաբազմազանությունը: Առաջին ազգային զեկույց, Եր.: Բնապահպ. նախար. հրատ., 158 էջ, 1999:
14. Հայկական սովետական հանրագիտարան: Հ. 3: Գլխ. խմբ. *Ա. Պ. Միսնյան*, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 720 էջ, 1977:
15. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Բ: Թռչուններ: Եր.: Այր-Քե, 130 էջ, 1992: Գիրք Գ: Սողուններ և երկկենցաղներ: Եր.: Փյունիկ, 96 էջ, 1998: Գիրք Դ: Ձկներ: Եր.: Մակմիլան-Արմենիա, 140 էջ, 2000:
16. *Ղարիբյան Ա.Ս.* Ռուս-հայերեն բառարան: Եր.: Հայաստան, 1434 էջ, 1982:
17. *Նաումով Ս.Պ.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Պրակ 1, Եր.: Հայպետուսմանկհրատ, 505 էջ, 1956:
18. *Զիվանյան Կ.Ա., Դանիելյան Ֆ.Դ., Ռուսկյան Ռ.Հ., Յավրույան Է.Գ.* Կենսաբանություն: Կենդանիներ (դասագիրք հանրակրթ. դպր. 7-րդ դաս. համար): Եր.: Մակմիլան-Արմենիա, 160 էջ, 2000:
19. Жизнь животных. 4. Рыбы. Под ред. Т.С. Рассе. М.: Просвещение, 575 с., 1983.
20. Жизнь животных. 5. Птицы. Под ред. Н.А. Гладкова, А.В. Михеева, М.: Просвещение, 611 с., 1970.
21. Киселев Я.Е. Рыбы наших вод. М.: Мысль, 288 с., 1984.
22. Краснопеяцев В.П. Человек дарует имя (о названиях животных). М.: Советская Россия, 124 с., 1988.
23. Никольский Г.В. Частная ихтиология. М.: Советская наука, 458 с., 1971.
24. Рыбы. Популярный энциклопедический справочник. Под ред. П.И. Жукова. Минск: Белорусская Советская энциклопедия, 311 с., 1989.
25. Советский энциклопедический словарь. Гл. ред. А.М. Прохоров. М.: Советская энциклопедия, 1600 стр., 1988.
26. Фасмер М.Р. Этимологический словарь русского языка. I А-Д, М.: Прогресс, 573 с. 1986.
27. Флинт В.Е., Бёме Р.Л., Костин Ю.В., Кузнецов А.А. – Птицы СССР. Под ред. Г.П. Деметтьева. М., Мысль, 637 с., 1968.

Ստացվել է 11.02.2011